

ԶԻԱՐՃԱՑՐԵՑ ԱՂԱՆԵՐԻՆ

ԳԼ.ԵԲ ՈՒՍՊԵՆՍԿՈՒ

I

Զմեռւաց գիշեր ժամը երկուսին երեք պարոններ մոտան Պետերբուրգի ռեստորաններից մէկը և վերցրին մի առանձնասենեակ։ Արդէն այնքան ուշ էր որ ռեստորանում սկսել էին նւազացնել լուսաւորութիւնը, ծառայողները կիսաքուն էին, թմրած, հոգնած և նոյն իսկ առանձնասենեակը բռնողներ հիւրերն էլ չէին արտայալում մի առանձին կենդանութիւն։

Հիւրերը իրաւ որ հոգնած մարդիկ էին. նրանց հոգնեցրեց և Պետերբուրգի ժամանակակից օրը իւր բոլոր երեակայական ինտերեսներով, հոգնեցրեց նրանց (աւելի ուղիղն է նրանցից երկուսին, որովհետեւ երրորդը դեռ մի շատ երիտասարդ պարոն էր) և անցկացրած ամբողջ կեանքը։ Երկուսը քառասունի մօտ էին, մի բան էլ աւելի։ Նրանցից մէկը մի լրադրի երդւեալ քընիկեօր էր, հասարակութեանը անյայտ և իզրեկ¹⁾ ստորագրուող, միւսը—զեմեց²⁾ էր։ Երբեմն նրանք դասընկեր էին և երիտասարդ, այնուհետեւ երկար ժամանակով բաժանեցին ջոկ-ջոկ ճամսապարհների։ Մէկին բանագատեց լրադրական աշխատանքը, միւսը իրան նսիրեց զեմստոօի զործունէութեան։ Եւ ահա մօտ օրերս նրանք իրար պատահեցին կիսամերմակած մագերով, հոգնած, հիասթափւած և կար-

1) Բառացի նշանակում է լուսական ի (y) ալդպէս է կոչում ֆրան-ախական ալբուբենի առաերից մէկը,

2) Զեմստոօ բառից, և նշանակում է դաւառական վարչութեան դուժիչ։

ծես—զուր, ապարդիւն տանջւած: Զեմեցը Պետերբուրգ էր գալիս վթարման ալուս, խօսակցելու, տեղեկանալու՝ վերջապէս երրա և առ-հասարակ շինկի նոր բան չը կայ, —որովհետև այնտեղ, իրանց մօտ, զեմստուօի գործունէութեան խորքում տիրում է դժոխային մի ձանձրովթ, մի անմիտ ունայնութիւն, խաւարամոլութիւն, գիշա-կերութիւն և ուր առհասարակ շշոնչ քաշելու բան չը կայ:

Որքան էր սակացն սրա զարմանքը, երբ որ, Պետերբուրգ հաս-նելուն պէս և հին ծանօթների հետ տեսնելուց յետոց, սրանց թւում նաև քրոնիկեօրի հետ, նա իմացաւ որ և այսուեղ — Պետերբուր-գում ոչնչից ոչինչ չը կայ, որ այսուեղ էլ տանջւում են, որ այս-տեղ էլ կենսատու հոսանքի բացակայութիւն է, կեանքի նեղութիւն և շաբլոնական զրականութիւն և այն Քրոնիկեօրը, պատահելով իւր վաղեմի ընկերոջ, նմանապէս յոյս ունէր նրանից վթարմեցուցի՛ց մի բան լսել, —չէ որ նա զեմստուօի մարդ է, չի նեղւած լրագ-րական զրականութեամբ, չէ որ նա այնտեղ կեանքի արմատների՛ մօտ է, այս, կեանքի մօտ և ոչ թանաքամանի, —բայց, աւաղ—մենք տեսանք արդէն որ զեմեցը նրան ոչնչով չ'ուրախացրեց, այլ ընդհակառակն, փչեց նրա վրա ցուրտը՝ մի տանջւած և ամայացած հոգու նոյն կերպով ինչպէս որ ցրառութեան արձագանք տւեց և քրո-նիկեօրի հոդին: Նրանք իրար պատահեցին տենդային ուրախու-թեամբ, դրկարաց, —բայց, թերևս նոյն իսկ րոպէում զգացին, որ իրանց մէջ բացակայ է նիւթը որով կարելի լինէր լցնել իրանց լայն բացւած սրտերը: Եւ արդէն մի տասը րոպէ շատ էլ ոչ կեն-դանի որքան բարձրաձայն խօսակցութիւնից յետոյ ընկերները զգացին մի պահանջ մի որ և է տեղ գնալ այն սենեակի միջից ուր իրար պատահեցին, և իրաւ գնացին նախաճաշելու, թէև ոչ մէկը և ոչ էլ միւսը այդ բանում իսկի կարիք չունէին:

Այդպէս էլ շարունակեց. նախաճաշելով, ճաշելով և ընթրիք անե-լով և երբեմն միայն ընդմիջելով ամենաչնչին գործերի ետևից ընկնե-լու, որպէսզի նախաճաշին, ճաշին ու ընթրիքին իրար նորից պատա-հեն — բարեկամները սկսեցին ժամանակ անցկացնել — լուելով ճաշին, հառաչելով, կռւելով, վրդովելով, նորից հառաչելով, հազիւ հազ աշխուժանալով պատանեկան իշողութիւններ մտարերելիս և նորից հառաչելով հէնց որ խօսակցութիւնը հասնում էր ներկայ օրին, այսինքն

հէնց որ դէմ էր ընկնում բռութ անկիւնիւ նրանք չը կորցրին հաւատող դէպի այն, ինչի որ հաւատում էին, և շարունակում էին յոյս տածել զէպի այն ինչի որ յոյս ունէին և առաջ, բայց թէ նրանց թէ հաւատը և թէ յոյսը արդէն տանջւած էր, տճե էր ու չէր պատճառում ոչ մի գւարճութիւն։ Այս ձևով արդէն քանի որ է, որ նրանք ժամանակ անցկացրին, տուն վերադառնալով դիշերւաց ժամը երեքին-չորսին, և ծանր քայլերով ու կարւող շնչառութեամբ բարձրանում Պետերուրդի բարձր սանդուխքներով։

Գալով երիտասարդին, որը եկել էր զեմեցի և քրոնիկեօրի հետ, նա թէև դեռ չէր հիսաթափւել և ոչ մի բանում, թէև նա դեռ թարմ և ջահիլ էր, — բայց ուենիորմների մարդկանց ընկած սերունդը, որին պատկանում էին զեմեցը և քրոնիկեօրը և որի շրջանում առհասարակ ժամանակակից երիտասարդները ստիպւած են որոնելու ուղեցոյցներ։ և առաջնորդողներ — այդ լնկած սերունդը արդէն ժամանակ ունեցաւ նրա վրա քնածոյ և վայրիվերոյ ներգործութիւն անելու։ Ընկած սերունդը նրան ոչ մի ուղղակի պատասխան չէր տալիս այն հարցին թէ Խնչ անել։ Ոմանք ասում են. ոզնա հերկիր, ձեռքերիդ արդեամբ ապրիր, իսկ իրանք չեն գնում. միւսները ասում են — «իսկի հարկաւոր չէ հերկելը, — սովորիր զիտութիւն — ահա զլխաւորը։ երրորդները ասում են՝ «ժամանակակից հասարակութեան կազմակերպութեան մէջ չը կայ ոչ մի արատ. նա է այնպէս — ինչպիսին որ պէտք է լինի, անխափիր գործի կանգնիր, արա այն ինչ որ կը հասնի — բայց պահպանիր հոգիդ և բանջարեղէն կերակրով կերակրւիր։ Երրորդները յամառապէս ապացուցանում են շարիքին չը զիմազրել իսկ չորրորդները նոյնքան լաւ համոզում են զիմազրութեան անհրաժեշտութիւնը։ Բայց միւնոյն ժամանակ ջահիլ այրի Ելենա Անդրէնան, որի հետ նա ծանօթացաւ համալսարանական երեկոյթին, նրան հիպնոսահարում է իւր բիւստով և խորհուրդ տալիս օպերա մտնելու, և միւնոյն ժամանակ — կուրսիստուհիները նրան երեկոյթի են կանչում, և միւնոյն ժամանակ — զեմեցը նրան Պալկին¹⁾ է քարշում, և միւնոյն ժամանակ, ճանապարհ զցելով մադամ Բուլկինալին — հրաւէր է սուանում անպատճառ դալ իւր

1) Պետերբուրդի ուստորաններից մին.

մօտ մի լուրջ գործի մասին խօսակցելու եւ վերջապէս — վիճակագրութիւնը Վիճակագրութեամբ պէտք է լուրջ կերպով պարապել — սա ամենասաղական, չէզոք և ազնիւ մի աշխատանք է:

Սօսաւորապէս այս է և ընդունին — ամենաընդհանուր գծերով գծագրւած այն բազմատեսակ ազդեցութիւնները ժամանակակից միջնավայրի, ուր երիտասարդը պատասխան պիտի որոնի այն հարցին թէ — ի՞նչ անել: «Կերթամ», մտածում էր նա բոլորովին անկեղծ, նման քրոնիկեօրին և զեմեցին, առաւօտեան ժամը չորսին տուն դառնալիս:

«Կերթամ», մտածում էր նա մութ խուցի մէջ լուցկի որոնելով: «Պէտք է փախչել», մտածում էր նա քունը տանելիս: Բայց առաւօտեան էլի հարկ էր լինում մաղամ Բուլկինայի հետ խօսակցելու: Նա շտապ հագնուում էր և գնում մօտը, բայց ճանապարհին պատահեց զեմեցը որը և նախաճաշի հրաւիրեց: Իսկ Մաղամ Բուլկինան: — Մաղամ Բուլկինան նմանապէս կարող է դալ մեզ հետ նախաճաշելու:

— «Հիանալիս: Մաղամ Բուլկինայի՝ քրոնիկեօրի և զեմեցի հետ նախաճաշը տևեց մի չորս հինգ ժամ և ինչ ասել կուզի որ էլի լիէր — «Հարին ոչ դիմադրութեամբ», ողիմադրութեամբ չարին», ևլուրջ լիէր — «Հարին ոչ դիմադրութեամբ», մասին ամեն տեսագործու, ներկայ բոպէն ջարդ ու փշուր անելու մասին ամեն տեսագործու, հառաջանքով, ծիծաղով, էլի հառաջանքով և վերջապէս: — կէտից,

— «Եկէք մի տրօյկա վերցնենք»:

— «Հիանալիս:

Եւ ահա կզզիները, մի ինչ որ է «Պոպմեյ»:

Ահա այսպէս էլ գնում է: Հէնց այն էր որ նստեց վիճակագրութեամբ պարապելու — միան է գալիս բիւսար, մտադրւեց թէ չէ խօսելու ևլուրջ լինդրի մասին — մին. էլ տեսար Պոմպեյումն է, կամ մի երեկոյթի, ուր իւր ձայնի բոլոր ոյժով գոյութինուշկան» է երգում: Իսկ առաւօտեան ժամը չորսին՝ տուն հացնելուց յետոյ ո-ու աիժովային, (որը հրաւիրեց անպատճառ իւր մօտ անցնել այս քանի օրերս, որովհետև ասելու բան ունէր) տուն վերադառնալիս՝ ինքն իրան էլի մտածում էր. «Կը փախչեմ, չէ — պէտք է փախչել», այսպէս

¹⁾ Madame = միկին:

մոտածում էր ու էլի այն դռան չէր մօտենում, որին որ հարկ էր:

Ակսիասվ բոլոր երեք հիւրերը իրաւ որ հոգնած մարդիկ էին. քրոնիկեօրը և զեմեցը ապրածի ապարդինաւորութիւնից, պատանին—որոշ և պարզ պերսպեկտիւայի բացակայութիւնից, իսկ ամենքը միասին ներկայ օրւայ ձանձրացնող, աղօտ, մռայլ, ամեն մի պարզ ու կենդանի հոսանքից զուրկ ժամանակից:

II

Առանձին սենետկ բռնելուց յետոյ մի առժամանակ հիւրերը մոլորւած մնացին թէ իսկապէս իրանք ինչու համար էին այզտեղ գտնուում: Իրանք հենց նոր էին ծանօթների մօտ, ուր կուշտ ձանձրացել էին, կուշտ կերել ու խմել և ահա մի ինչ որ սաստանայ նրանց նորից մի վանդակ գցեց՝ ձանձրանալու, ուտել և խմելու համար: Իսկապէս ոչ ոք ոչինչ չէր ուզում: պէտք էր գնալ պառկել քնել. բայց միթէ կարելի էր այդպիսով վերջացնել օրը: Ձէ որ անցաւ ամբողջ օրը, բայց կարծես նրանից ոչինչ էական բան չը դուրս եկաւ. թւում էր թէ չափազանց ձանձրալի ու ծանր էր այդ օրը առանց վախճանի թողնել: Եւ ահա պէտք էր մի կերպ վերջ տալ:

—Պէտք է զանգակ տալ, չէ,—արտասանեց ձանձրացած կերպով զեմեցը:

—Այո, բարբանջեց նիրհող քրոնիկիօրը, զահաւորակի վրա փուլած, մէկն ու մէկդ զանգահարեցէք:

—Ախր, զանգակը կողքիդ է... Զեռդ մին մեկնիր...

—Հա, է!

Քրոնիկեօրը մեկնեց իւր ձեռքը զահաւորակի վրայով, որոնեց զանգակը և գտնելով կոճակը՝ մատը վրան դրեց:

Երեաց քնաթաթախ, հոգնած, թմրած լակէյը: Արա տանջած ամբողջ գէմքի վրա կարծես ծանրացել էր մի ամբողջ դար կերուխում մի աւանդութիւններով այն հիմնարկութեան, ուր սա ծառայում էր, — հիմնարկութեան—որի հարիւրամեակը նոր էր տօնւելի և ակէյի գէմքը արտայայտում էր ահապին հոգնածութիւն և թւում էր թէ նա հոգնած է այս անվերջ հարիւր տրի չը դադարող ծառայու-

թիւնից կրթւած ոռւս հասարակութեանը, որը նոյն իսկ ուտելում չի ուզում կարգին ուտել և որից ոչ մի կարգին բան չի դուրս գալիս ուզում կարգին ուտելը աւելի և շշմեցրեց հիւրերին։ Նա լուռ սպասում ծառայի երևալը աւելի և շշմեցրեց հիւրերին։ Բայց սրանցից ոչ մէկի գլխով բան էր սրանց կարգադրութիւններին, բայց սրանցից ոչ մէկի գլխով բան չէր գալիս—Ուրեմն, —ասաց զեմեցը, աշխատելով կայտառ ձեւանալ, —

մւտենք թէ ինչ անենք։

—Վալլահ, չը գիտեմ, կիսաքուն մրժմրժաց քրօնիկեօրը։

—Իսկ դմւք, Խարիտոնովի

—Ինձ համար դիմ մէկ է։

—Այդ ինչպէս թէ դիմ մէկ է։ Ուտելու էք թէ չէ։

—Ի՞նչ արած, դէ, լաւ... կուտեմ։

—Ապա տուր կերակուրների ցանկի թուղթը։ Լակէյը մեկնեց գներ պարունակող գրքոյկը կերակուրների և գինիների վերաբերեալ և այդ գրքոյկը երկար ձեռքէ ձեռք անցաւ, առանց որ և է արդիւնքի։ Զեմեցը թերթոտելով այդ գրքոյկը, տողէ տող կարգադրով, արձակեց իւր ժիշտոի կոճակները, կարծելով որ ստամբուլ՝ իրան քիչ ազատ դրութեան մէջ տեսնելով, ինքը որ և է կերակուր կը սրահանջի, բայց թէ ստամբուլ լուռ էր մնում և ոչնչից ոչինչ չէր ուզում։

—Լաւ, լաւ, յետոյ, ասաց վերջապէս զեմեցը, գրքոյկը քրօնիկեօրին յանձնելով։

Բայց թէ սա էլ իսկի չը գիտէր թէ իրան ինչ է հարկաւսր, ուստի գրքոյկը թերթելուց յետոյ դրեց սեղանի վրա ու ասաց։

—Սատանան է խարար... չը գիտեմ!։

—Դմւք—Խարիտոնովի

—Ես գուցէ մի բիֆշտեկս ուտեմ։

—Այ քեզ ստամբուլ! բիֆշտեկս։

Խարիտոնովը միմիայն հռհռաց։

—Այ ջահելութիւն... իսկ մենք. բայց չէ որ ուշ է. խոմ այսպէս չի կարելի—մի բան պէտք է...։

—Ասուած վկայ որ դիմ մէկ է ինձ համար։

—Սատանան գիտի թէ ինչ է սա... Ապա ցանկի թուղթը տուր։ Լակէյը, որը շարունակ համբերութեամբ սպասում էր հրամանի և յինւում էր կամ մի կամ միւս ոտի վրա, երևի որ խղճաց

ւաղաներից անօգնական դրութեան. նա թէքւեց քաղաքավարի կերպով դէպի զեմեցի կողմը և պառաւ դայեակի հոգատարութեամբ արտասանեց.

— Արդեօք չէիք ցանկանալ նաւագա ձկնից... Բոլորովին նոր է ստացւել:

— Իրաւ որ, վազուց է որ ես նաւագա չեմ կերել, ուրախալի բացականչեց զեմեցը: Հիանալի բան է, ինձ համար նաւագա բեր:

— Ֆրիտ-ս¹⁾ հարցրեց լակէյը նոյն հոգատարութեամբ իւր ձայնի մէջ:

— Ի՞նչ:

— Տեղեկացնում եմ թէ ինչպէս էք հրամայում. տապակած, թէ...

— Դէ ի հարկէ տապակած: Բայց թէ ինչու դու «Փրիտ» եւ ասում և ոչ թէ պարզ կերպով—տապակած նաւագա:

Այս խօսքերը զեմեցը արտասանեց առանց որ և է կարիքի և միմիայն նրա համար որ ուրախ էր դառել. իսկ աւելի ուրախ էր դառել առաջին այն պատճառով, որ սիրու նաւագա ուզեց, իսկ երկրորդ այն պատճառով, որ նրա վրա շատ լաւ տապաւորութիւն արեց պառաւ ճորտ դայեակի հոգացող ուշադրութիւնը դէպի ազայի երես տւած որդին²⁾, մի ուշադրութիւն, որը լսելի էր ձայնի մէջ ու երեսում նաև լակէյի աչքերում և շարժողութիւններում, այն լակէյի, որը հոգս տարեց իւր աղային դժւար դրութիւնից ազատելու: Ազաների որդիքը, թէկուզ ու վարդմերի ժամանակակիցներ են, թէկուզ զեմեցներ են, բայց էլի սիրում են, շատ են սիրում մինչև այժմս էլ հոգատարութիւնը դէպի իրանց անձը այս նւիրւած ծառայողների կողմից և իրանց ուրախ են զգում երես առած երեխաների դրութիւնով:

— Պարզ, մեր՝ ասի ձեռով, ասէիր—տապակած, շարունակում էր կատակիներ անել և դուրս տալ ինչ որ մոքին էր դալիս բառասնամայ երես առած աղայի որդին,—բայց չէ, մի ինչ որ է Փրիտ... ինչու Փրիտ, ինչու:

¹⁾ Ֆրիտ Փրանսերէն. նշանակում է տապակած, վերջին ձալնը—ուսականութիւն է, որի համեմատ ասում է՝ դաս, նէտս, ալոս և ալն,

²⁾ Եօրցուք.

— Նրա համար է Փրիտ կոչւում, ժպտալով նոյն հոգացող ժպիտով խօսք առաւ լակէցը, որ Փրիտ բաւը համատարած է: Ժպիտով իսօսք առաւ լակէցը, որ Փրիտ բաւը համատարած է: Այս աշխարհիս երեսին ամեն տեսակ ազգ շատ կայ—զերմանացիք, Փրանսիացիք, հայեր, պերսեանցը¹⁾—քիչ կան... Ամեն մէկը ամեն մի բանի մի անուն է տալիս... Օրինակի համար, ասենք թէ կայ ժամբոն անունը: Իսկ—ասածը Բ'նչ է: Թէ որ քննենք, կ'երևայ որ դա պարզ ի պարզոյ խօսապուխտ է²⁾ ուրիշ ոչինչ. բայց թէ որ ամեն մի օտար երկրացի իւր գիտեցածովը բան ուզէր—իսկի բան չէր կարելի հասկանալ... Այ, հէնց այդ պատճառով է որ բոլոր տեղերի համար ընդունում է —դիցուք Փրիտ, օմէտ, կամ թէ բեօֆ, շատոբրիան, կիւլոտ...

Զանձրացող քաղաքացիները այս մենախօսութեան՝ ամեն մի բառից յետոյ, յայտնի չէ թէ ինչու, իրանք իրանց աւելի ուրախ և աւելի թեթեւացած էին զգում: Հաւանական էլ է, որ որա պատճառը լինէր խօսակցութեան անսպասելի թեման, մի թեմա, որը ոչ մի առընչութիւն չունէր ժամանակակից, չափազանց ձանձրացնող թեմաների հետ, թեմաների, որոնք անսպասելի կերպով զգւցըրել են մեր ձանձրացնողներին և որոնցից որ, այնու ամենայիւ, նրանք չէին կարողացել ազատւել: Մեր ձանձրացող քաղաքացիները, տանջող օրւայ մէջ սպառելուց յետոյ խօսակցութեան այս բոլոր հոգնեցնող թեմաները և համզալելով որ վերջինիս ապարդիւնութեանը անհրաժեշտ է վերջ տուլ մի որ և է վճռական բանով, ինչպէս օրինակի համար, մի ընթրիքով, երբ որ սկի ախորժակ էլ չը կայ բան ուտելու,—ուրախացան որհոգնեցնող թեմաներից դուրս,—որոնք կարծես միանձայն սպառում լինէին կեանքի բոլոր խորինները—գոյութիւն ունին ինչ որ է չը նախատեսած ու խորհրդածութեան արժանի թեմաները—Այո, հանաք անելով—լուրջ արտասանեց զեմեցլու Ընը, ուրեմն, այ թէ ինչպէսը, որտեղինը:

—Պարզ ասած—տաւարի միտ

—Այո, բայց թէ ինչպէսը, որտեղինը:

¹⁾ Գուենկական խօսք—իտիանակ պերսիեանէ=պարսիկներ.

²⁾ Վետչահ, որը սական ոչ թէ արևում է չորացնուամ, ալ կախ տւած դիրքով ծուփսի ենթարկուամ մի մութ սենեակուամ:

Լակելը թերեւս քաշւում էր պատասխանելուց:

—Այսինքն... ինչպէս ասեմ... միս էլի!

—Հա, էլի —միս, բայց թէ ինչ տեսակի...

Այ, դիցուք, անտուեկոտը մի տեսակ է, իսկ կիւլոտը...

Լակելը խոնարհեցրեց իւր աչքերը և ինչ որ ախուր մի զիծ գծւեց նրա դէմքի վրա:

—Այդ մէկը, ներողութիւն արէք, արտասանեց նա քաշւելով, այդ բոլորը մենք չենք կարող խմանալ:

—Ապա ինչպէս ես կարողանում ծառայել:

—Ի՞նչպէս եմ կարողանում: Անունները գիտենք, բայց թէ մանրամասն խմանանք — դա մեզ անկարելի է: Ասուած ենք կանչում որ պատւիրածի անունը չը մուտանանք ու մինչև խոհանոց հասնելը չը շփոթենք, երբեմն պատահում է սպասաւորում ես երեքին, չորսին, երկու առանձնասենեակներում — Ասուած տայ որ միայն այդքանը մարդ մոքում պահի իսկ թէ որ այդ ամենը մանրամասնաբար տակիցը գիտենանք — այդ խոմ մեր ոյժերից վեր է:

—Միթում թէ:

—Հաւատացէք... Խեքներդ դատեցէք. միայն բեօֆը քսանուհինք տեսակի է, տոմասով ու ֆինզերբով սօսւները, կամ թէ գինիները ու լիկեօրները: Դեռ գինիները, էլի մի բան է — նումերներ կան... իսկ լիկեօրները, օրինակի համար. գոյնը մէկ է, իսկ համը ջոկ: Մէկը պահանջում է քինսժեր, միւսը բենեղիկտին: Խոչ էք հրամայում. մարդուս դլուխը հէնց նրանից միայն պտղու կը գայ մինչեւ որ նա մտքումը պահի թէ որ տակառինն է այս ու այն լիկեօրի շնչը! Մեզ երբեմն պատահում է հիւրեր ճանապարհ գցել առաւօտուայ ժամը վեցին, իսկ իննին էլի ոտքի վրա ենք... Խոչպէս ենք կարող բոլորը գիտենալ: Փառք Աստծոյ որ դեռ գների ցուցակը անսխալ անդիր եմ արել, ապա մին նայեցէք այս գրքոյնը — տակէ տակ պէտք է անդիր իմանանք...

Տրակտիրի լակելը, սկսելով այս ամենահասարակ խօսակցութիւնը, շարունակելով հոգացող դայեակի պարզասիրտ և հանաքավարի եղանակով — իւր վերջին խօսքերի արտասանած ժամանակ այդ սովորական մարդը ամենքի համար մի անսպասելի կերպով մեր ձանձրացող աղաներին հանդիսացաւ իրը ամենահասարակ, պարզասիրտ գիւղացի

մուժիկի մէկը, աշխատաւորի, մշակ դատապարտւածի մէկը, որը իւր հացնէ վաստակում քրոյինքը երեսին: Մէկը նրան ֆռակ է հաղցրել, սովորեցրել նրան իրան լակէյավարի պահել, հրամայել իւր դէմքով զւարձութիւն արտայալտել ուստող ու խմող աղաների առաջ, անգիր անել աւեց ինչ որ է հարիւր բառեր, որոնք, ով գիտէ, ինչ են նշանակում, մի խօսքով դիմակաւորեց և ծածուկ դարձրեց սրա խիական մարդկային էութիւնը—և ահա այս էութիւնը, դառն ու դատապարտւած գոյութիւնը հասարակ աշխատաւոր մարդու, որը ոչ բաւարար չափով քնում է ու ոչ կերակրւում, յանկարծ լսելի եղանքա մենախօսութեան մէջ լիկեօրների և ֆինզերբների մասին և այնքան պարզ և այնքան տիրալի, որ ձանձրացող աղաները չը համարձակեցան շարունակել իրանց հանաքները:

—Ի հարկէ, շարունակեց լակէյը արդէն ոչ իբրև լակէյ, այլ իբրև դատապարտւած մի մշակ, ի հարկէ, ով որ, օրինակի համար, գիտէ օտար լեզու ու ազատ ժամանակ էլ ունի, դէ ի հարկէ հեշտ կը լինի մոլումը պահի, բայց թէ մեզպէս մուժիկի համար դա շատ ու շատ դժւար է: Ծնւած օրիցս չիմացայ թէ աշխարհիս երեսին ինչ ասել է ւազատ ժամանակ... Տասը տարեկան էի որ ինձ գիւղից Պետերբուրգ հասցըին... Մեր նարուլաւի նահանգում խալխը գործի է գնում—կամ Մոսկա է գալիս—տրակտիրներում ծառայելու, կամ գործարաններում... հայրս գործարանում մեռաւ, մնացինք մայրս, երկու փոքրիկ քոյլերս, ու ես՝ տասը տարեկան: Մայրս գործարան մտաւ, իսկ ինձ Պիտեր տարան: Մեզ, նասուլաւի տղերանցս, Պետերբուրգ տանում են հորթերի պէս: Այդպիսի մուժիկներ կան—մի տասը տղերը կը հաւաքի ու իւր հաշով Մոսկա կամ Պիտեր բերելով այս ու այն տրակտիրներում ու կարսակներում կը ցրւի: Դէ ՚ի հարկէ օգուտ ունի այդ բանից: Տասը տարեկան էի որ ինձ զետեղցին Սեննայա հրապարակի վրայ գտնւող ամենաստոր տրակտիրներից մինի մէջ: Գիշեր ցերեկ առուտուր կար, կառապանի էր: Երկու տարի գլասովիկայից ետև կանգնած ամաններ էի լւանում: Իսկ թէ ինչքան ծեծ կերայ. ապտակներ էին ու գլխիս ու ծոծրակիս հարւածներ: Ել ասել չի լինիլ թէ ինչքան համբերեցի մինչեւ որ Ասուած շնորհք տւեց Սեննայի աւազակարունից մի ուստորանի հանել: Ինչ խօսք որ բարի մարդիկ օգնեցին ու սովորեցրին ամեն բան

— Այդաեղ բնչ սովորեցնելու բան կայ:

— Խնչպէս չէ. որ հիման հարսանիքներին ովֆիցիանտ են հրաւիրում, պէտք է ամեն բան դիտենալ—օռշադ, լիմոնադ և այլ կարգ ու կանոնները: Խնչպէս չէ, սարսափելի բաներ են: Այ, օրինակի համար թէ ինչպէս համեցէք անել ու վարւել իմանալ... Ապա հիւրերից մինի վրա սուս թափիր... Խսկոյն դուրս կ'անեն... ինչպէս է կարելի... է քունը շատ է պակաս... դժւար է: Մարդ հանգստութիւն չունի ոչ ցերեկը ոչ գիշերը: Ամենազլիսաւորն այն է որ մեր պաշտօնում քունը շատ է պակաս... դէ այսպիսի կեանքի մէջ էլ ուր մնաց որ մարդս ամեն բան իմանալ կարողանայ—Ասուած տայ որ մարդուս ցիշողութիւնը իրան չը խսրի. այ, այս զների ցուցակը ես հազիւ հազ երեք ամսում զիշերները սերառում էի մինչև որ անգիր անել կարողացար: Ասուած եմ կանչում որ ըլ շփոթեմ: Ու, բացի այդ, պէտք է հիւրի հետ վարւել իմանալ, համեցէք անել, երբեմն էլ այնպիսի խոռվարար մէկն է պատահում, որ տրակտիր է գալիս միայն սկանդալներ սարքելու համար: Երբեմն էլ պատահում է, որ խոհանոցում կամ քիչ են տապակում կամ թէ շատ են տապակում: չէ որ բոլորի համար ցիշոցներ լսողները մենք ենք, ախր: Այնպիսի չար հիւր էլ է պատահում երբեմն - որ հէնց այն է ուզում որ ամանը ուղիղ շողրտի: այդպիսի մէկի համար, թէ որ նեղացած էլ է լինում, շատ սովորական բան է Փուակից քաշըշոտելը, ճղելը, սօսւս վեր ածելը, — բայց թէ Փուակը, ինչ էլ որ անես, ամենապակասը մի իննը ուուրլի արժի: Ձէ. մեր պաշտօնը ծանր պաշտօն է: Խօսք չկայ՝ օգուտի համար ենք շալիշ գալիս, թէ չէ, այս կեանքին ով կը համաձայնէր: .

— Լաւ, խոկ քո ճաշակով մը կեանքը քեզ աւելի կը լինէր համելի: Լահէյի հոգնած, աշխատաւոր գէմքը վայըլեց մի ակնթարթում:

— Գիւղական կեանքին աշխարհիս երեսին չի հասնիլ ոչ մի կեանք, ասաց նա մանկական ուրախութեամբ: Հէնց դա է իմ ամենահիանալի երազներիցս մէկը—մարդ ապրի գիւղում իւր տնտեսութիւնով: Ափաս չի... Խնչպիսի տեղեր կան մեզանում: Զիով առաւտօռ որ դուրս չես գալիս—օդը հէնց գիտենաս բուրում է, արօմատ է, շըջակայքը տասնուհինդ վերստի վրա երեսում են, լաւ եղանակին կարելի է քսան գիւղ համրել: Փառք քեզ Ասուած, էնէնց լաւ է որ... Մին երկու տարի էլ կը չարչարւեմ ու կերթամ իմ տեղս...

ի՞նչ էք հրամայում... համեմատել կը լինի. սեփական տար, սեփական բանջարանոց, ազգականներ, քոյլեր, կնիկ, մայրիկ, ամենը ուզածիդ պէս, ոչ ոք քեզ հրամաններ չի տալիս, չի ստիպում, —ինչ համեմատութիւն։ Միայն զիւզի համար է որ ես սուտուղով խօսքերով կուռում եմ։

—Սմէտ էլ...

—Ուզիկ էք հրամայում. թէ որ մեզ նման չքաւոր մէկը ճշմարտութեամբ ապրի—երբէք չի կարելի որ նա լոյս աշխարհ ընկնի. Աստւած վկայ։ Ինքս էլ մոտածել եմ թէ ինչպէս ապրեմ առանց խարդախութեան։ Բայց թէ տեսնում եմ, —իսկի հնարաւանց կայ։ Այ, օրինակի համար, պսակւել եմ, ուզիդն ասեմ խարձութեամբ եմ պսակւել կատարեալ խարդախութիւն գործեցի։

—Խարդամխութիւն։

—Այս, կեղծութիւն. ինքս ինձ հարուստի տեղ կեղծեցի—ու պսակեցին։ Կնիկս, ինչ առեմ, ոչ մի բանի չի կարելի նմանեցնել, ու—մի ուրիշ տեսակի բան է։ Թէ որ ինձ ու նրան զուրս անեն մի դաստարկ, անմատչելի տեղ, մի անապատ տեղ, ու առանց կոպէկ փողի, —նրա հետ կորչել չի լինիլ, ու հէնց այն բռպէին հետը համ տաք կը լինի, համ ուրախ, համ հիանալի։ Երեք հատ ծեղից տաք կատարելու տեղ կը շինի—այ ինչպիսին է նաւ իրան համար պատսպարւելու տեղ կադրիլի ժամանակ հէնց որ հետը ծանօթացայ (ինչ խօսք որ ես ֆռակով էի, իսկ նա—տիկնոջ նման, շլէֆով ու ամեն բանը կարգին), հէնց որ ծանօթացանք իրար հետ ու իրար առաջին անգամից դուր եկանք—ես նրան ասացի. ինչ—ես, Մաշա, կարծում օրինաւոր պսակադրութեան մասին։ —Զիտալ, ասում է, ծնողս, որովհետեւ դու չքաւոր ես, իսկ մեր ընտանիքը—հարուստ մուժիկներ են։

Եւ իրաւ որ հարուստ մուժիկներ են, հին աւանդութիւնների լուրջ մի տուն...

—Քաս, ասում եմ, ինչպէս անենք։ Մտածիր, ասում է, մի տարի էլ կը սպասեմ, ոչ ոքի չեմ գնալ, իսկ մի տարուց աւելի չեն թոյլ տալ որ սպասեմ (ի հարկէ, կասկած չը լարուցանելու համար իրան հովհարում է իւր հովհարով)։ Ի՞նչ արած։ Ես խոմ այնպիսի բնաւորութիւն չունիմ, որ դանակ վերցնեմ ու այնպէս գնամ փող վաս-

տակեմ։ Ես եկայ Պետերբուրգ, կարօտից մեռնում եմ, տանջւում եմ, ու չը զիտեմ թէ ինչ անեմ Մեր ռեստորանի շւէցարը ինձ հարց ու փորձ արեց ու բանին տեղեկանալուց յետոյ ահա թէ ինչպիսի խորհուրդ տեց Մեծ դարդ է, չէ, ասում է, միթում թէ սկի ճար չը կայ. գնայ, ասում է, վիճակախաղի հին տոմսակներ ու յայտարարութիւններ առ—աց քեզ փող։ Զէ որ այդ մե խալիսը տղէտ է ու խաւար. նա բան չի հասկանալ։ Եւ ի՞նչ էք կարծում։ Ես էլ թուժունի դուքանից դուքան ընկայ. «արդեօք հին տոմսակներ չունիք»—«ինչպէս չէս ու կամաց կամաց երեք ոռուրլու այդ զիրիլիք երկու հարիւր հաստ առայ, առիւծները վրան, մի տուն, մի արծաթի սամովար, սերւիզ, սարսափելի հարասութիւններ։ Եսկ շւէցարը, Աստուած նրան կեանք տայ, ասում է. «Այ տղայ, սպասիր, ասում է, մինն էլ ճարեմ քեզ համար։ Ես, ասում է, մի բանկիրացին գրասենեակում էի ծառացում, որը յայտարարութիւններ էր հարասրակում, որոնք որ փողի շատ նման էին։ Եւր սունդուկը քրքրեց ու այնտեղից մի այնպիսի ծրար հանեց այդ յայտարարութիւնների—զրուստ և լիզորիշնիւ տուակներ։ Դիփ շրջաններով, սատղերով, զանազան գոյների, ու էլի 200 հազար, եօթանասուն հինգ հազար, հինգ հարիւր, հարիւր... Թւանշանները այնպէս էին, որ մի վերստից էլ երեսում էին։—«Առ, ասում է, մեր տղայ, գնայ բանըդ տես։ Բարի սհաթին լինի։ Հոգի էր, հոգի այդ շւէցարը, ինքը գւարդէեց—Աստուած նրան ջան տայ։ Այ, այդ ձեռով զրամագլուխներ հաւաքեցի, մի զրամակիր-բումաժնիկ էլ առայ ամենալայններից, այնպէս լցրի որ երեայ ու փողի էլ նման լինի—ու գէպի գիւղ։ Այդ զրամագլուխները չէ որ մի ամբողջ տարի էի աշխատում։ Եկայ զիւզ, տեսնեցայ Մարեացի հետ, գաղտնիքը նրան չեմ բաց անում—մոտածում եմ՝ չը լինի նա նեղանայ խարէութեան համար, ազօթք արեցի, ու զնացի ծնողների մօտը... Ելի մի երեկոյթ էր։ Նստած եմ հօրը մօտ, ինքս ինձ անփոյթ պահում, կարծես մի աղա լինեմ, բառ չեմ ասում, ու մին մին բաց եմ անում բումաժնիկս ու մէջից այնպէս եմ պապիրոս հանում որ միլիրններս քթին դիպւեն։ Յամառ ծերուկ էր, բայց փողի համար աղան։ Աչքերը գցեց բումաժնիկիս վրա... Այդ մէկը ես նկատեցի ու մի ուրիշ անգամ էլ որ եկայ ու էն զիրիլը մէջ ու մէջ արի իսկական փողի հետ (մի լիսուն ոռուլի փող ունէի, այ-

սինքն իսկական փող) — իրար հետ խառնեցի ու ինձ համար հանգիստ նստած եմ; Ելի մի պապիրոս հանեցի ու դիտմամբ բումաժգիս վեր զցեցի, իսկ միլիոններս յատակի վրա որ չը փուեցին... Նենիկս վեր զցեցի, իսկ միլիոններս յատակի վրա որ չը փուեցին... Ներուկը երկու ձեռքով բռնոտում է ու տեսնում թէ իսկական փող ու էն զիրիլն էլ նրան փող երևաց... Տեսնում եմ—չէ, որ աչք վառւել են... Մին, երկու, երեք էլ որ նրան նոյն ձեռք տաքացրի թէ չէ, յետոյ էլ ասում եմ.—Շէսէնց ու հսկուց ձեր աղջիկն եմ ուզում, Մաշան, տուն պիտի շինեմ, դուքան պիտի դնեմ, փողեր ունիմ: Ու ծերուկն էլ կակղեց: «Համաձայն եմ: ասում է: Ու հինգ հարիւր ռուբլի ես նրանից դջլեցի, իբրև բաժինք, բացի խուրդաց մուրդացից...»

Այս բոլորը այնքան երեխայական ուրախութեամբ ասւեց, որ ճիշդ երեխայաբար ուրախացան նոյն իսկ ձանձրացող աղա հիւրերը:

— Ու այդ փողերով առւն էլ առաջ, կով էլ, Մօրս, քոյրերիս, կնոջս բնակեցրի, մի խօսքով հիմք դրի տանս համար, ու յետոյ գնացի աներոջս ոտները ընկայ ուներողութիւն խնդրեցի... Ամա, իմս հասաւ ինձ: Բայց թէ ինչ պատմեմ: Նաև հարկաւորս է... Հիմա հաշուել ենք, երբ որ տեսան իմ աշխատութիւնս ու հոգատարութիւնս: Իսկ Մաշան այդ բանի համար ինձ այնպէս գնահատեց—որ աւելին չի կարելի... Հէնց որ պասկեցինք, ես նրան ասեցի. «Գիտես, ասում եմ, Մաշուտիա, պէտք է զորդը իմանատա: Ու պատմեցի: Կարծեցի թէ կը նեղանայ, խաբերայ կը համարի, իսկ նա մոտեց ու մտածեց ու էկէնց մի խելքին, ասում է, դեռ չեմ տեսել, ոնց որ դուն, Միշա, ասում է, ինձ խլեզիր: Այ, խելօք: Գլուխս շոյում ու խօսք չի գտնում ինձ գովարանելու... Ու շւէյցարն էլ ուրախ էր, ուրախ երբոր պատմեցի ու նա էլ խմացաւ, քիչ էր մնում երկուսս էլ ծիծաղից մեռնէինք: Այդ օրը խմեց ու ինձ էլ խմացրեց (առաջին անգամն էր կեանքիս մէջ որ խմեցի) իւր փողով... «Ճուր ինձ, ասում է, այդ միլիոնները — ես էլի մէկին կօգնեմ: Ես էլ նրան յանձնեցի բոլոր կարողութիւնս... Այ, տեսնում էք! Իսկ թէ որ չը խմբէի: Մայրս խոմ աշխատելուց հոգին կը զուրս դար, քոյրերս էլ զործարանից չէին ազատվիլ իսկ հիմա, փառք Աստծոյ, իրանք իրանց տէր են, ու սիրով ապրում: Զէ՞ որ մարդս ուզում է մարդավարի ապրել: Հիմա էլ որ չը կայ—ես ամեն մի չնչին բան տուն

եմ ուղարկում Մի տասնը կը հաւաքի թէ չէ—զիւլ: Երեքհատանոց ձեռս ընկաւ—էլի այնտեղի Մենակ ունեցած փռակներիցս տասնուշեցը այնտեղ եմ ուղարկել:

Այս խօսքերը ակամայից ծիծաղից սպանեցին ունկնդիրներին:

—Տամսնուվեց Փռակ, հարցրեց զեմեցը ճիշդ աղավարի մի ծիծաղով: Գիւղը: Այս, ինչ բանի են նրանք այնտեղ պէտք:

—Գիւղումը: Ի՞նչ էք համայսւմ: գիւղումը ամենաչնչին բանը հարկաւոր է զալիս, միան թէ նա այնտեղ շատ է կերպարանափոխած լինում... Պետերբուրգում, օրինակի համար, Փռակը հարկաւոր է տղամարդուն, դիցուք մեզ, ծառաներիս, կամ թէ աղաներին, իսկ գիւղում—Փռակը փառաւորապէս կերպարանափոխում է բարաների¹⁾ համար:

—Ֆռամկը:

—Այո, Փռակը: Հրամանքդ ուշադրութիւն դարձրէք որ թէկուզ մահուդը մաշւած է լինում, բայց թէ էլի նա ամուր է, թէ որ շուռ տրւի—հենց գիտենաս նոր լինի: Ես ունենում եմ մին-մին շատ սպատւական տեսակի Փռակներ. մի Փռակ մեռելի վրայից էի առել—նա գեռ. հիմա էլ չի մաշւել:

—Ո՞նց թէ մեռելի վրայից:

—Այստեղ, կրուրի ծառայողներից մէկը մեռաւ, կինն էլ Փռակ հազցրեց նրան,—իսկ Փռակը նւիրովի էր մի կոմսից: Դազաղում դրեց թէ չէ, սկսեց ափսոսալ խեղճ կնիկը. «Թէ որ, ասում է, ծախէի ու մի հնաւունը առնէի, էլի ինձ մի բան կը մնար»: Ես էլ փոխեցի, իմ հինս տւի, հինգ ոռուրի էլ վրան, ու նորը հանեցի մեռելի վրայից, լաւ մաքրեցի, չորացրի, սպիրաով էլ մաքրեցի ու երեք տարի էլ ինքս նրան թաշախուատի հագայ... հիմա երկրորդ տարին է, ինչ որ նա գիւղումն է բանում.

—Չէ, դու էն ասա, թէ ի՞նչպէս են ձեր բարաները Փռակներում ման զալիս:

—Փռակը մեզանում այնպէս է կերպարանափոխուում, որ սկի նրա հոտոն էլ չի մնում: Մարդու միտն էլ չի զալիս թէ էն Փռակը ինչ ձեխէր: Իսկ դուք կարծում էք թէ մեր բարերը Փռակներով են ման

¹⁾ Բաբա—ուսա գիւղացի կնամարդ:

գալիս: Ես հիմա այնուեղ կին ունեմ ու երկու օրիորդ քոյրեր: Մէկին ուզում եմ մարդու տամ, որ մուժիկին էլ տուն բերենք: Մեր տնտեսութիւնը կաթնալին է. չորս կով և հորթեր, հորթերին խմացնում ենք ու ծախում: Այդ տնտեսութեան մէջ է որ Փռակ-ներս հարկաւոր եկան. օրինակի համար, ձմեռ է ու զիշերը պէտք է վերինալ, կթել խմացնել, կերակրել, ու այս բանի համար մեր բարեօնկաները Փռակներից դիպլոմատ շորերի յարմար մի բան շինեցին. Կրծքի այս տեղերը ծալւած են (իւր Փռակի վրա նա ցոյց տւեց թէ ինչպէս), ասել է թէ կուրծքը տաք կը լինի, իսկ այսուեղերը, ասել է, երեք Փռակներից Փալդերը կտրւած են, վեց ֆալդերից մի իւրեկա է դուրս գալիս, իրար կարւած են, տակն էլ բամբակ, ի հարկէ - ասել է թէ տաք կը լինի, ու երեք չորս չորս հերիք կանի. բայց թէ որ բուրքին ծախես - մի ռուրլուց աւելի չի տալ, իսկ այն Փռակները, որոնք որ անփալդ մնացին - նրանցից էլ կոֆտաներ են շինել, մէկը մօրս համար, տակն էլ նապատակի մորթի - շատ է մրսող դառել, պատաւը, ու այնքան էլ չը մրսիլ այդ կոֆտայում: Էհ, ի՞նչ էք հրամայում: Գիւղումը: Գիւղումը ամեն մի բան կերպարանափոխուում է մեր ձեռով ու մուժիկա-վարի դառնում:

- Բայց թէ դա հիանալի է, զդրդացրեց ամբողջ սենեակը հըրճ-ւած զեմեցը իւր բարձր ծիծաղով:

- Դէ, ի հարկէ, հիանալի է, շարունակեց լակէյը, աւելի ևս ուրախացած քան զեմեցը: Եւ լակէյը շարունակեց, փայլը երեսին. դէ, ի հարկէ, հիանալի է: Տունս համարեա թէ կարգին է, քոյրս մարդու կը տամ, թերեւս կարելի լինի նաև մի քիչ հող ուզեմ: Իսկ ինքս, թէ որ Աստւած համբերաւթիւն տւեց, մի երջու տարի էլ կը չարչարւեմ, ու ես էլ այնուեղ կ'երթամ դէպի սեփական կտուրի տակը: Ու մի լաւ կը հանգստանամ այս իմ բոլոր չարքաշութիւն-ներիս փոխարէն: Ու Մաշալի հետ կ'ապրենք շիտակ, ազնիւ, մեր սեփական աշխատանքով: Իսկ թէ մեր տեղերը ինչպէսն են՝ փառք քեզ Աստւած...

- Դէ, դա խոմ հիանալի է, հոհում էր զեմեցը:

Եւ ամենքը ուրախացան:

- Ուրեմն ճաւագա» էք հրամայում, իւր պարտաւորութիւն-

Ները միշելով, առաց լակէյը, վերադառնալով իւր պաշտօնին և իւր ձեւերին:

— Նաւազգաւ Ֆրիտ Բեր, բեր, հիանալի բան եղաւ, ախորժակ էլ եկաւ. բեր նաւազան:

— Խնչ որ է ես էլ եմ ուզում ուտել, մրմթաց քրոնիկեօրը: Խնձ... ինչպէս էր անունը... Կիւլոտ բեր:

— Հրամանքաւ:

Լակէյը գնաց, իսկ քիչ առաջ ձանձրացող ընկերները սկսեցին իրար հետ աղմկալի խօսակցել ամեն տեսակ այրուղ թեմաների վրա: Սկսեցին խօսել ու վիճել ժողովրդի մասին, ինտելիգենցիայի մասին, Ռուսաստանի և Նորովայի մասին: «Այնտեղ է, այնտեղ կենդանի լարը բզաւում էր զեմեցը: Այնտեղ է, այնտեղ կենդանի ցանկութիւնը ապրելու, այս, ապրելու, այս, անպատճառ լոյս աշխարհում, և ոչ ու, ոչ էլ աև զիշերով և անպատճառ շշիուակ և ազնիւա! Անպատճառ—ապնիւա իւր ազատ կամքով, զիւղացիավարի... Այս, այնտեղ, այնտեղ! իսկ մենք, մենք, մենք...

Մի խօսքով, նոյն թեմաները, որոնք գեռ բոլորովին սպառւած էին երեւում և բացի հոգնածութիւնից և ապարդիւն ձանձրովթից ուրիշ բան չէին ներկայացնում: Նորից անսպառ երեացին, նորից կենդանացրին անվերջանալի երկար խօսելու և անվերջանալի երկար ուտելու սովորութիւնը:

— «Չելովեկ»¹⁾, լուսում էր տմեն բոպէ աղմկալի առանձնասենեակից. ընկերները ուստում էին, խօսում էին և ուտում ու երկար ոչ մի կարիք չէին զգում առանձնասենեակից հեռանալու:

III

Առաւողւայ ժամը մօտ վեցին, նրանք ամենքը, որորւելով և բռնելով մութ սանդուխը սուրաներից, ծանր քայլերով ուղեւորւում էին զէսպի իրանց բնակարանները և նրանցից ամեն մէկը մտածում էր թէ—զիփ կորած չէ, որ այնտեղ ինչ որ է կենդանի բան կայ, և որ ռառնասարակ պէտք է հեռանալը շուտ այստեղից:

¹⁾ =ռուսերէն՝ մարդ, ալտոնդ սպասաւորի մտքով:

—Սա ինքն է որ կ'այ, շիտակ, աղնիւ, ինքն է որ կ'այ, ասում էր նաև
տաքացած Խարիտոնով պատանին իւր խուցի մթութեան մէջ, վրայից
հանելով մուշտակի հետ սիւրտուկը, կօշիկների հետ կալոշները: Նա
է որ կ'այ... և, շիտակ և ազնիւ... ընդա... Անպատճառ կըսլիեմ...
պէտք է անպատճառ փախչել, դա է զլիսաւորը... Փախչել: Միայն թէ
տ-առ Զիժովի մօտ կ'երթամ և... վթրջացաւ: Ե՛յ, սիրելիք, բղաւեց
նա ընդհանուր լուսութեան և հիւրանոցի մեռած քնի մէջ—ինքն
իրան մի փառաւոր տրօյկաի վրա երեսակացելով:

Բայց ուշքի գալով և իւր չորս կողմը նայելուց յետոյ հան-
դարու կերպով անկողին մոտաւ, հառաչեց ու ինքն իրան մի անգամ
ևս ևս կ'երթամ ասելուց յետոյ, խաղաղ կերպով փակեց իւր հոգ-
նած արտևանունքները:

Ահա մի երես էլ ևմի կտոր հողին մասին: Լոկ միտքը սրա մա-
սին միանդամից կենդանացրեց և փայլեցրեց տրակտիրային լակէյի
ծանր աշխատանքով տանջւած հոգին — դարձնելով նրան խսկական
մարդ, և աղաների մօտ էլ զարթեցրեց... ուտելու ախորժակ: